ԺԻՐԱՅՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԺԻՐԱՅՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ

ԵՐԵՎԱՆ
ԳԱՍՊՐԻՆՏ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2016

ZHIRAYR MKHITARYAN

CONSTITUTIONOMICS

ECONOMIC APPROACH TO CONSTITUTIONALISM

YEREVAN
GASPRINT PUBLISHING HOUSE
2016

Նվիրվում է
Հայաստանի Հանրապետության
անկախության 25-ամյակին

ՀՏԴ 342.417
ԳՄԴ 67.400
Մ 793

Մխիթարյան Ժիրայր

Մ 793 Սահմանադրատնտեսագիտություն. տնտեսագիտական մոտեցում սահմանադրականությանը / Ժ. Մխիթարյան. — Եր.: Գասպրինտ հրատ., 2016. — 120 էջ:

Հետազոտության կենտրոնական առանցքը սահմանադրականությունն է, երկրում դրա մակարդակի բարձրացման հիմնահարցերը, ինչը XXI դարի գերակա միտումն է լինելու:

Գրքում համակողմանի անդրադարձ է կատարվում սահմանադրատնտեսագիտական եռաչափ հետազոտական տիրույթին, մասնավորաբար՝ սահմանադրականության տնտեսագիտությանը, որը «տնտեսագիտական մոտեցման» կիրառությունն է սահմանադրականության հանդեպ, սահմանադրական տնտեսագիտությանը՝ ավանդական տնտեսագիտության շրջանակները զգալիորեն ընդլայնած Նոբելյան մրցանակակիր գիտաուղղությանը և ՀՀ սահմանադրական բարեփոխումների տնտեսագիտական հատույթին:

Գնահատվել է սահմանադրականության մակարդակն արտացոլող «Սահմանադրականության համաթվի» արժեքն աշխարհի 142 երկրների համար, կատարվել որակական եզրահանգումներ:

Նախատեսված է տնտեսագետների, իրավագետների, ինչպես նաև պետական և հանրային կառավարման հարցերով հետաքրքրվողների լայն շերտերի համար:

ՀՏԴ 342.417
ԳՄԴ 67.400

ISBN 978-9939-869-16-2

© Մխիթարյան Ժ., 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան.....7

Ամփոփագիր.....8

«Սահմանադրականության համաթվի» 2016 թ. վարկանիշները.....17

ՄԱՍ 1. ՍԱՀՄԱՆԱԴՐԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՏԻՐՈՒՅԹԸ.....18

Գլուխ 1. Սահմանադրականության տնտեսագիտություն. «տնտեսական գիտության» զարգացման նոր հանգրվան.....19

1.1.1. Քաղաքատնտեսությունն որպես հետազոտության միացյալ տիրույթ.....20
1.1.2. Քաղաքատնտեսությունից դեպի տնտեսագիտություն.....20
1.1.3. «Տնտեսագիտական մոտեցման» ձևավորումն ու զարգացումը.....23
1.1.4. Սահմանադրականության տնտեսագիտություն կամ «տնտեսագիտական մոտեցում» սահմանադրականությանը.....28

Գլուխ 2. Սահմանադրական տնտեսագիտության հարացույցը.....32

2.1.1. Սահմանադրական տնտեսագիտության «առաջին քայլերը».....32
2.1.2. Սահմանադրական տնտեսագիտության հասկացութային շրջանակները.....33
2.1.3. Սահմանադրական տնտեսագիտության առարկայական տիրույթը.....35
2.1.4. Սահմանադրական տնտեսագիտության առարկայի համալիր բնույթը.....37
2.1.5. Սահմանադրական տնտեսագիտության տեսական նախահիմքերը.....38
2.1.6. Սահմանադրական տնտեսագիտության գաղափարական հիմնասյուները.....40
2.1.7. Սահմանադրական տնտեսագիտության զարգացման ընթացքը.....42
2.1.8. Սահմանադրական տնտեսագիտության մեթոդաբանական գործիքակազմը.....50
2.1.9. Սահմանադրական տնտեսագիտության հիմնական ուղղությունները...51
2.1.10. Սահմանադրական տնտեսագիտության հարակից գիտաուղղությունները.....56
2.1.11. Սահմանադրական տնտեսագիտության հիմնադրույթների կիրառությունը ՀՀ գյուղատնտեսության օրինակով.....60

Գլուխ 3. ՀՀ սահմանադրական բարեփոխումների սահմանադրատնտեսագիտական հատույթի քննական վերլուծություն.....65
1.3.1. Առաջընթաց արձանագրած դրույթներ.....66
1.3.2. Անորոշություններ պարունակող դրույթներ.....68
1.3.3. Հետընթաց արձանագրած դրույթներ.....70
1.3.4. Չլուծված կամ կիսալուծումներ արձանագրած այլ հարցեր.....71

ՄԱՍ 2. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԹՎԱՅԻՆ ՁԵՎԱՉԱՓԸ.....75

2.1. Սահմանադրականության հասկացութային շրջանակները.....77
2.2. Սահմանադրականության գնահատման հասկացութային շրջանակները.....81
2.3. Սահմանադրականության գնահատման կառուցվածքային ձևաչափը...83
2.4. Սահմանադրականության գնահատման տվյալների շտեմարանները....85
2.5. Սահմանադրականության գնահատման ցուցչակազմն ու ենթացուցչակազմը.....89

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

1. Սահմանադրականության համաթվի ենթացուցիչների բնութագիրը.....91
2. Սահմանադրականության համաթվի կառուցման մեթոդաբանությունը.....101
3. Գործածված որոշ եզրերին համարժեք օտարաբանությունների բառացանկ...111
4. Հետազոտության արդյունքների հրապարակումները.....112

Executive Summary.....114

ՆԱԽԱԲԱՆ

Հարցին, թե՝ եռանկյունի անիվներով կառքը կերթա՞, հնչում է այսպիսի պատասխան. «Է՜հ, կարող է, բայց արի ու տես այդ կառքում նստած մարդկանց վիճակը…»: Կլոր անիվներով կառքը (լավ սահմանադրությունը), իհարկե, անհամեմատելի է եռանկյունի անիվներով կառքի (վատ սահմանադրության) հետ: Սակայն եթե կլոր անիվներով կառքը գնում է խորդուբորդ ու քարուքանդ ճանապարհով (սահմանադրականության անբավարար մակարդակ), այստեղ նստածների վիճակն ավելի բարվոք չի լինի եռանկյունի անիվներով կառքում նստածների վիճակից: Անկասկած, հասարակության համար շահեկան է կլոր անիվներով կառքով հարթ մայրուղով ընթանալը: Կարելի է նույնիսկ սլանալ:

Սահմանադրականության բովանդակությունը սահմանադրական շինարարությունն է, սահմանադրության նորմերի իրացումը, դրանց պահպանումը, ապահովումը: Սահմանադրականության պակասուրդի աստիճանական մեղմումը ժողովրդավարական, իրավական և սոցիալական պետության համապատասխան բոլոր հայտանիշների առումով, բարդ հիմնախնդիր է: Գոյություն չունի միանգամյա ազդեցության համադարման, որը կարճ ժամանակահատվածում արմատապես կշտկի իրավիճակը՝ այսօր դեռևս տիրապետող սահմանադրականության ոչ բավարար մակարդակը, սակայն այդ ուղղությամբ գիտալուծումների տրամադրումը ժամանակի հրամայականն է:

Սահմանադրականության հիմնախնդրի հետազոտությունն ունի լուրջ տնտեսագիտական հայեցակետ: Այսօր տնտեսության կարգավորման ինստիտուտների անբավարար գործառությունը գերիշխող է դարձնում շուկայական տարերքը, երբ մարդկանց սոցիալ-տնտեսական իրավունքների իրացման դեֆիցիտը հսկայական չափերի է հասնում՝ հիմք հանդիսանալով ներհասարակական պայթյունավտանգ իրավիճակների առաջացման համար: Սրանք խնդիրներ են, որոնց արդյունավետ լուծումները պետք է փնտրել սահմանադրականության բավարար մակարդակն ապահովող կառուցակարգերի մեջ: Վերջիններս գտնվում են ինտենսիվ գիտական մշակումների փուլում Երևանի պետական համալսարանում՝ ԵՊՀ Սահմանադրական տնտեսագիտության գիտավերլուծական կենտրոնի շրջանակներում:

Սահմանադրականությունը պետք է հանդիսանա այն տանիքը, որն իր հովանու տակ կառնի ՀՀ քաղաքացուն՝ պատնեշելով նրան ամենատարբեր արգելախութերից, թույլ տալով դուրս բերել Հայաստանի Հանրապետությունն երկարատև կայուն զարգացման անշեղ հետագիծ: Այդ նպատակի գիտական ապահովման ճանապարհին որոշակի հանգրվան է սույն աշխատությունը:

Սարգսյան Հայկ
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Սահմանադրությունը ծույլ մարդու մը կը նմանի, որ եթե ձեռքեն չբռնես, չքալեր, նստած տեղը կը մնա, օր քան զօր կը տկարանա և կը մեռնի: Սահմանադրությունը ի՞նչ կրնա ընել ինք իր գլխուն, ոտք չունի, որ քալե, երեսփոխանները պետք է զանիկա քալեցնեն, անոնց ալ մեծ մասը տարին անգամ մը միայն ժողովքին ներկա կը գտնվին[1]*:*

— Հակոբ Պարոնյան

1.XX դարն ողջ աշխարհում նշանավորվեց սահմանադրությունների ընդունման հաղթարշավով: XXI դարի գերակա միտումը սահմանադրականության հաստատումն է լինելու, երբ սահմանադրական հիմնարար սկզբունքներն ու նորմերը տեքստային ձևակերպումներից «միս ու արյուն» կստանան, կիրացվեն իրական կյանքում՝ դառնալով ապրող իրողություններ:

1.1. Համընդհանրական դիտահորիզոնում հարկ է արձանագրել, որ աշխարհի սակավաթիվ երկրներ են հաջողել միայն սահմանադրականության բարձրամակարդակության ապահովման հարցում: Մինչդեռ բազում երկրների բնութագրականն ու ուղեկիցն է դարձել սահմանադրականության պակասուրդը՝ տեղ-տեղ ընդունելով ահռելի չափեր, ինչն արտացոլվում է հանրային կյանքի գրեթե բոլոր ոլորտներում զարգացման արգելակմամբ, երբ տնտեսական զարգացման հեռանկարներն ևս դառնում են խիստ մշուշոտ: «Դեպի՛ սահմանադրականություն» ուղենիշի ոչ պատշաճ հասցեագրումն ուղիղ համեմատական կախվածության մեջ է գտնվելու «ձախողված» երկրաընտանիքի ընդարձակման հետ՝ առաջ բերելով նոր աֆղանստաններ, լիբիաներ, սիրիաներ… Նմանօրինակ գերանբարենպաստ զարգացումների կանխարգելման հուսալի երաշխիքն երկրում սահմանադրականության պակասուրդի հաղթահարմանը նպատակամիտված գործուն ջանքերի գործադրման և անընդհատելի շարունակականության ապահովման մեջ է, ինչն անհնար է իրականացնել առանց սահմանադրականության և դրա պակասուրդի գնահատման համարժեք գիտամեթոդական կառուցակարգերի առկայության, որոնք հնարավորություն կընձեռեն համակողմանիորեն ախտորոշել սահմանադրականության վիճակն երկրում՝ թույլ տալով ոչ միայն չափել դրա մեծությունը, այլև՝ բացահայտել դրա պակասուրդը կազմավորող դրդապատճառները՝ այսպես ասած սահմանադրականության «անհարթությունները», և նպատակաուղղել ջանքերը դրանց

[1] Տե՛ս **Պարոնյան Հ.** Երկեր, «Սովետական գրող» հրատ., Եր., 1979, էջ 465:

հարթման ուղղությամբ, ասել է թե՝ իրականացնել սահմանադրականության շարունակական մշտադիտարկում և կառավարում:

1.2. Հիմնախնդիրն ունի նաև ընդգծված տեղական արդիականություն՝ պայմանավորված Հայաստանի Հանրապետությունում ընթացող սահմանադրական արդի զարգացումներով: Վերջիններիս ամենանշանակալի հանգրվաններից էր բարեփոխված Սահմանադրության ընդունումը: Սակայն դեկտեմբերի 6-ն ոչ թե որոշակի եզրագիծ էր, այլ ընդհակառակը՝ հանրային-քաղաքական-տնտեսական կյանքի սահմանադրականացման նոր սկզբնագիծ, քանզի անգամ բարեփոխված սահմանադրությունն երկրում սահմանադրականության հաստատման բավարար պայման չէ: Ինչպես հստակ ամրագրվեց ՀՀ Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում. «պետք է ներդրվի երկրում սահմանադրականության ապահովման ու դրա մշտադիտարկում իրականացնելու գործուն համակարգ... Սահմանադրության ընդունումն ինքնին երկրի սահմանադրաիրավական խնդիրները չի լուծում: Դրանց լուծման երաշխիքը Սահմանադրությունը կյանքի կոչելն է, երկրում սահմանադրականության հաստատումը... Վերջինիս ապահովման համար... սահմանադրականության շարունակական ախտորոշումը /դիագնոստիկան/ և մշտադիտարկումը /մոնիթորինգը/ միջոց են հասարակական կյանքում օբյեկտիվ իրավիճակը գնահատելու և պետական իշխանության մարմինների գործառնական լիազորությունների արդյունավետ գործադրմամբ առկա անհամապատասխանությունները, բացերն ու տարաբնույթ ձևախեղումները հաղթահարելու համար [կառավարում - **Ժ.Մ.**]»: Այս խորին խորհրդի գիտական նյութականացումը կարող է ապահովվել «տնտեսագիտական մոտեցման» գործադրմամբ սահմանադրականության հանդեպ, սահմանադրականության տնտեսագիտության շնորհիվ:

2. Սահմանադրականությունը կարելի է բանաձևել, որպես զարգացման մակարդակ, երբ սահման է դրված պետական իշխանության կամայականության հանդեպ՝ այն սահմանափակված է մարդու իրավունքներով և իշխանական թեվերի բաժանման մեխանիզմով, երբ պետական իշխանությունը գործում է արդյունավետորեն՝ ծառայելով քաղաքացիների բարեկեցության շարունակական բարձրացման վերջնանպատակին, երբ սահմանադրական հիմնարար սկզբունքներն ու նորմերն իրացված են իրական կյանքում: Առաջադրված գործառնական սահմանման հիմքում դրված բովանդակային իմաստի պարզորոշման նպատակով կատարենք երեք դիտարկումներ:

2.1. Ամենաընդհանուր մակարդակում, սահմանադրականությունը սահմանադրական հիմնական սկզբունքների ու նորմերի իրացվածությունն է իրական կյանքում: Ցանկացած սահմանադրություն բաղկացած է երկու հիմնամասից. առաջինը՝ նվիրված **մարդու իրավունքներին**, իսկ երկրորդը՝ **պետաիշխանական համակարգին**: Այս իմաստով, սահմանադրականությունն ևս պետք է բաղկացած լինի այդ **երկու չափումներից**: Սակայն ի հեճուկս սահմանադրության, որը դիտում

է այդ չափումները՝ դրանց գծով դրույթների ամրագրման և հռչակման դիտակետից, սահմանադրականությունը դիտում է դրանք իրական կյանքում իրացվածության մակարդակի դիտակետից:

2.2. Բացասական սահմանադրականություն. չնայած մարդկության և պետականության հազարամյակների պատմությանը՝ «սահմանադրություն» հաստատությունը բավական երիտասարդ է և գոյություն ունի երկուսուկես դարից էլ պակաս ժամանակահատվածում: Դա պայմանավորված է նրանով, որ սահմանադրությունների անհրաժեշտությունը ծագեց ավատատիրական աշխարհակարգի կործանման և միահեծան վարչակարգերը հանրապետականներով փոխարինման պատմական ժամանակաշրջանում, երբ անհրաժեշտություն առաջացավ սահմանափակել իշխանության կամայականության սահմանները, այլ կերպ ասած՝ բացառել իշխանության կենտրոնացումն որևէ կետում՝ միապետի ձեռքում, ինչը բնորոշ էր «նախասահմանադրական» ժամանակաշրջանին: Այս զարգացումների համատեքստում ընդգծվեց նաև «սահմանադրականություն» հասկացությունը՝ բնորոշելով պետական իշխանության կամայականության սահմանափակվածության գոյությունն իրական կյանքում. սահմանափակվածությունը մարդու իրավունքներով և իշխանական թևերի բաժանման մեխանիզմով: Այս փիլիսոփայությունն է ամփոփված դիտարկվող հասկացության հայերեն ստուգաբանությունում. կազմված լինելով «սահման» և «դիր» բառարմատներից, այն նշանակում է «սահմաններ դնել»: Սահմաններ դնել ինչի՞ նկատմամբ: Հե՛նց պետական իշխանության և նրա կամայականության նկատմամբ:

2.3. Դրական սահմանադրականություն. սահմանադրականությունը չպետք է դիտարկվի բացառապես, որպես պետական իշխանության սահմանափակում, քանզի այդ պարագայում անտեսվում է նրա հաջորդ կարևոր առումը (ասպեկտը), համաձայն որի՝ սահմանադրականությունը պահանջում է նաև արդյունավետ և իրավասու (կոմպետենտ) պետական հաստատությունների առկայություն, որոնց գործունեությունը նպատակաուղղված է պետության գոյության հիմնանպատակի իրացմանը՝ իր անդամների (քաղաքացիների) բարեկեցության մակարդակի բարձրացմանը, այսինքն՝ ունի նաև պոզիտիվ կողմ:

2.4. Այսպիսով, սահմանադրականության առաջադրված սահմանման համար, որպես ելակետային հիմք է ընդունվել առաջին հայացքից իրարամերժ իր այդ երկու առումների *փրամախոսական (դիալեկտիկական) միասնությունը*. առումներ, որոնցից առաջինը շեշտադրում է պետական իշխանության սահմանափակման, իսկ երկրորդը՝ պետական իշխանության ակտիվ դրական դերակատարման կարևորությունը սահմանադրականության ապահովման գործում:

3. Սահմանադրատնտեսագիտական հետազոտական տիրույթի առաջին չափումը սահմանադրականության տնտեսագիտությունն է:

3.1. Սահմանադրականության տնտեսագիտությունը «տնտեսագիտական մոտեցման» կիրառությունն է սահմանադրականության հանդեպ: «Տնտեսագիտական մոտեցումը» հաջողությամբ կիրառվել է ավանդաբար ոչ տնտեսագիտական բազմաթիվ տիրույթների նկատմամբ՝ հանգեցնելով գիտահետազոտական բազմաթիվ նոր ուղղությունների առաջացման, իսկ այդ միտումը ստացել է *«տնտեսագիտական կայսերապաշտություն»* անվանումը: «Տնտեսագիտական մոտեցման» առանցքը կազմում են երկու հիմնարարներ՝ մեթոդաբանական անհատապաշտությունն ու ռացիոնալության սկզբունքը (որը պայմանավորում է առավելացման վարքագծի դրսևորումը): Այսպես, տնտեսագիտական մոտեցմամբ սպառողը դիտարկվում է, որպես ռացիոնալ էակ, ով առավելացնում է իր օգտակարությունը, կազմակերպությունը դիտարկվում է, որպես ռացիոնալ միավոր, որն առավելացնում է իր շահույթը և այլն: *Առաջարկվում է «տնտեսագիտական մոտեցումը» կիրառել պետության, որպես ռացիոնալ անհատների (քաղաքացիների) և ռացիոնալ պետական հաստատությունների ամբողջության հանդեպ, որը պետք է ձգտի առավելացնել սահմանադրականությունը* («տնտեսագիտական մոտեցմանն» ու սահմանադրականության հանդեպ դրա կիրառությանն է նվիրված գլուխ 1-ը):

3.2 Սահմանադրականության տնտեսագիտությունը գիտահետազոտական նոր ուղղություն է, որն ուսումնասիրում է երկրում սահմանադրականության մակարդակի առավելացման (մաքսիմալացման) հիմնահարցերը՝ սահմանադրականության գնահատման, մշտադիտարկման ու կառավարման շարունակական գործընթացների իրականացման ճանապարհով:

4. Սահմանադրականության տնտեսագիտության ելակետը սահմանադրականության գնահատման հետազոտությունն է: Քանի որ սահմանադրականությունը խիստ բազմաչափ և բազմաձալ հասկացություն է, ուստի դրա գնահատումը միաչափ մակարդակում՝ որևէ անհատական ցուցչի միջոցով, անհնար է: Այս խնդիրը կենսագործելի է բացառապես բաղադրյալ ցուցչի՝ **«Սահմանադրականության համաթվի»** կառուցման ճանապարհով, որն էլ դիտարկվել է, որպես սահմանադրականության գնահատման հետազոտության անկյունաքար (սահմանադրականության գնահատման կառուցվածքային ձևաչափը և մշակված մեթոդաբանությունը ներկայացված են մաս 2-ում և հավելված 2-ում, համապատասխանաբար):

4.1. Հայաստանի Հանրապետությունում սահմանադրականության վիճակի ախտորոշման հիմնարդյունքներն են[2].

4.1.1. 2016 թ. Հայաստանի Հանրապետությունը «Սահմանադրականության համաթվով» աշխարհի 142 երկրների շարքում զբաղեցրել է 95-րդ հորիզոնականը:

4.1.2. Հայաստանը դասվել է սահմանադրականության միջինից ցածր մակարդակ ունեցող երկրների շարքը:

4.1.3. Սահմանադրականության մակարդակը Հայաստանում կազմել է 43.9 միավոր, իսկ սահմանադրականության պակասուրդը, համապատասխանաբար, 56.1 միավոր:

4.1.4. Հետխորհրդային երկրների շարքում սահմանադրականության մակարդակով Հայաստանը գերազանցում է Ռուսաստանին, Ադրբեջանին, Տաջիկստանին, Ղազախստանին ու Ղրղզստանին և զիջում Մերձբալթյան երկրներին, Վրաստանին, Ուկրաինային ու Մոլդովային:

4.1.5. Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի բոլոր երկրները գերազանցում են Հայաստանին «Սահմանադրականության համաթվի» վարկանշային աղյուսակում:

4.1.6. Հայաստանի Հանրապետությունում սահմանադրականության պակասուրդը պայմանավորող հիմնական գործոններն են սոցիալական ապահովության իրավունքի, սեփականության իրավունքի ոչ բավարար իրացվածությունը, դատական իշխանությունը, իշխանական թևերի բաժանման սկզբունքի և իրավունքի գերակայության ցածր մակարդակը, ըստ հաջորդականության:

4.1.7. Սահմանադրականության պակասուրդին նվազագույնս են նպաստել աշխատանքի իրավունքը, բավարար կենսամակարդակի իրավունքը, տնտեսական գործունեությամբ զբաղվելու և ազատ տեղաշարժման իրավունքը:

4.1.8. Սահմանադրականության ապահովման գործում պետաիշխանական հաստատությունների շարքում ամենամեծ դերակատարությունը պատկանում է դատական իշխանությանը, այնուհետև՝ գործադրին և օրենսդրին:

---

[2] Ներքոբերյալ ախտորոշումը կարելի է իրականացնել դիտարկված 142 երկրներից յուրաքանչյուրի հանդեպ:

Գծապատկեր 1. Սահմանադրականության ՀՀ քարտեզը



4.2. Աշխարհում սահմանադրականության վիճակի ախտորոշման հիմնարդյունքներն են.

4.2.1. Աշխարհի 142 երկրների շարքում սահմանադրականության ամենաբարձր մակարդակ ունեցող երկրներն են՝ Դանիան, Ֆինլանդիան, Նոր Զելանդիան, Միացյալ Թագավորությունը, Իռլանդիան, Բելգիան և Ավստրիան:

4.2.2. Դիտարկված երկրների շարքում սահմանադրականության ամենաբարձր պակասուրդ ունեցող երկրներն են՝ Զիմբաբվեն, Եմենը, Լիբիան, Սիրիան և Իրանը: Նկատենք, որ վերջիններիս շարքում այնպիսի երկրներ են, որոնք այսօր գտնվում են սահմանադրական լրջագույն ճգնաժամում և պետականության փլուզումների հորձանուտում:

4.2.3. Սահմանադրականության միջին մակարդակն աշխարհում 53 միավոր է, ինչը նշանակում է, որ սահմանադրականության պակասուրդը համաշխարհային գերակա միտում է:

4.2.4. Հյուսիսային Ամերիկայի (79.1 միավոր), Եվրոպայի ու Կենտրոնական Ասիայի (65 միավոր) տարածաշրջանները բնութագրվում են սահմանադրականության բարձր մակարդակով, Արևելյան Ասիայի (54.9 միավոր) և Լատինական Ամերիկայի (52.7 միավոր) տարածաշրջանները՝ միջին, իսկ Հարավային Ասիայի (43.3 միավոր), Ենթասահարային Աֆրիկայի (42.4 միավոր) և Մերձավոր Արևելքի ու Հյուսիսային Աֆրիկայի (40.4 միավոր) տարածաշրջանները՝ ցածր մակարդակով:

Գծապատկեր 2. Սահմանադրականությունն աշխարհում 2016 թ.



5. Որպես հետագա քայլեր, սահմանադրականության գնահատման հետազոտության հիման վրա պետք է իրականացվեն սահմանադրականության մշտադիտարկման ու կառավարման հետազոտությունները:

5.1. Սահմանադրականության մշտադիտարկման հետազոտությունը միտված է ժամանակի ընթացքում սահմանադրականության և դրա պակասուրդի մակարդակի փոփոխության միտումների ուսումնասիրմանը և այդ միտումները պայմանավորող պատճառների բացահայտմանը:

5.2. Սահմանադրականության կառավարման հետազոտությունը միտված է երկրի սահմանադրականության մակարդակի բարձրացմանը՝ շեշտադրելով այն

ուղղությունները և դրանց գծով գործողությունները, որոնց կենսագործումը թույլ կտա գործնականում մոտենալ սահմանադրականության առավելացման նպատակային ֆունկցիայի բավարարմանը:

6. Սահմանադրատնտեսագիտական հետազոտական տիրույթի երկրորդ չափումը սահմանադրական տնտեսագիտությունն է: Վերջինս նախորդ դարի երկրորդ կեսին ձևավորված երիտասարդ գիտաուղղություն է, հիմնադրված ամերիկացի տնտեսագետ Ջեյմս Բյուքենենի կողմից, ով 1986 թ. արժանացավ Նոբելյան մրցանակի. «տնտեսական և քաղաքական որոշումների կայացման տեսության *սահմանադրական* և պայմանագրային հիմքերը ձևավորելու համար» (սահմանադրական տնտեսագիտության հարացույցի ներկայացմանն է նվիրված գլուխ 2-ը):

6.1. Սահմանադրական տնտեսագիտությունը բանաձևվում է, որպես գիտաուղղություն, որն ուսումնասիրում է ազգային տնտեսական համակարգի շրջանակներում անհատի սոցիալ-տնտեսական իրավունքների առավելագույն բավարարման հնարավորությունները՝ տնտեսական նպատակահարմարությունը սահմանադրական զարգացման առկա մակարդակի հետ օպտիմալ համակցման ճանապարհով:

6.2. Սահմանադրական տնտեսագիտությունը զգալիորեն ընդլայնեց ավանդական տնտեսագիտության տիրութային սահմանները: Հայտնի է, որ տնտեսագիտությունը *գիտություն է ընտրության մասին*: Սակայն սովորական տնտեսագիտական վերլուծությունները կենտրոնանում են *առկա սահմանափակումների **շրջանակներում** ընտրության կատարման վրա*: Մինչդեռ սահմանադրական տնտեսագիտությունն ուղղորդեց վերլուծությունը դեպի *սահմանափակումների **միջև** ընտրության կատարումը*՝ այդպիսով ներկայացնելով քննության «ավելի բարձր մակարդակ»: Այն վերլուծում է կանոնների (սահմանադրական) ընտրությունն՝ ի հեճուկըս կանոնների շրջանակներում ընտրության՝ ստանալով նաև *«կանոնների տնտեսագիտություն»* անվանումը:

Վերոհիշյալ տարանջատումն իրականացրեց Ջ. Բյուքենենը՝ հետևելով իր գաղափարական նախորդին՝ շվեդ տնտեսագետ Կնուտ Վիքսելին, ով ուշադրություն էր հրավիրում կանոնների կարևորության վրա, որոնց շրջանակներում քաղաքական գործիչները կատարում են ընտրություն՝ արտահայտելով այն համոզմունքը, որ **բարեփոխումներին միտված ջանքերը պետք է ուղղված լինեն կանոնների փոփոխությանը, այլ ոչ թե գործիչների վարքագծի վրա ներազդելու ճանապարհով սպասվող արդյունքները ձևափոխելուն:** Վիքսելյան այս մտքում ամփոփված է սահմանադրական տնտեսագիտության հիմնափիլիսոփայությունը:

6.3. Սահմանադրական տնտեսագիտությունը տնտեսագետների և իրավագետների՝ տնտեսական գործունեության հաստատութենական-նորմատիվ ապահովման հիմնախնդիրների հանդեպ սահմանադրական իրավունքի կիրառման

հարցերի **համալիր հետազոտական տիրույթ է՝** հանուն երկարաժամկետ տնտեսական զարգացման և համընդհանուր բարեկեցության ապահովման:

7. Սահմանադրատնտեսագիտական հետազոտական տիրույթի երրորդ չափումն երկրի սահմանադրության տնտեսագիտական հատույթն է: Այն նախևառաջ զատորոշվում է սահմանադրականության առաջին չափման սոցիալ-տնտեսական իրավունքների հատույթում՝ արտացոլելով պատշաճ կենսամակարդակի, աշխատանքի, սոցիալական ապահովության, սեփականության, տնտեսական գործունեությամբ զբաղվելու և այլ իրավունքների իրացվածությունը: Բացի այդ, այն զատորոշվում է սահմանադրականության երկրորդ չափման պետաիշխանական հաստատությունների գործունեության արդյունավետության հատույթում՝ հաշվի առնելով տնտեսության պետական կարգավորման հաստատությունների որոշիչ դերակատարումն երկարաժամկետ կայուն տնտեսական զարգացման ապահովման գործում (ՀՀ սահմանադրական բարեփոխումների սահմանադրատնտեսագիտական հատույթը համակողմանի քննական վերլուծության է ենթարկվել և ներկայացված է գլուխ 3-ում):

* * *

ԺԻՐԱՅՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ.

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ

ZHIRAYR MKHITARYAN

CONSTITUTIONOMICS.

ECONOMIC APPROACH TO CONSTITUTIONALISM

Թուղթը՝ օֆսեթ 80գ: Չափսը՝ 70x100 1/16:
Տառատեսակը՝ GHEA Grapalat: Ծավալը՝ 7.5 տպ. մամուլ:
Տպագրված է «Գասպրինտ» տպագրատանը: